ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԶՈՐԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2>>

ք. Եղվարդ **«30» Օգոստոսի 2019թ.**

Եղվարդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար՝ **Ն. Սարգսյանի**, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Ագարակ>> ԲԲԸ** -ն, ի դեմս տնօրեն՝ **Կ. Բարսեղյանի**, որը գործում է ԲԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<<Զորավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **20-ը դեկտեմբեր 2019 թ.**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **54 490 800 (հիսունչորս միլիոն չորս հարյուր իննսուն հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ, որից **9 081 800 (ինը միլիոն ութսունմեկ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՆԳxԿԾ, որտեղ՝

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Եղվարդի համայնքապետարան	**<<Ագարակ>> ԲԲԸ**
ք. Եղվարդ, Երևանյան 1	**ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի**
ՀՀ Ֆ/Ն գործառնական վարչություն	**<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աշտարակի մ/ճ**
Հ/հ 900112101028	**Հ/հ 247070005407**
ՀՎՀՀ 03546128	**ՀՎՀՀ 05003862**
Համայնքի ղեկավար՝ Ն. Սարգսյան	**Տնօրեն՝ Կ. Բարսեղյան**
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« » օգոստոսի 2019թ. կնքված
<<ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2>> ծածկագրով պայմանագրի

Զորավան վարչական տարածքի մանկապարտեզի հիմնանորոգման ծավալաթերթ-նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Հին ներկի քերում պատերից և առաստաղից	$մ^2$	934.8	0.19	177.61
2	Միջնորմների քանդում	$մ^2$	134.3	0.58	77.90
3	Կերամիկական սալերից հատակների քանդում	$մ^2$	144.6	0.30	43.38
4	Դռների բլոկների տեղահանում	$մ^2$	52.6	0.83	43.65
5	Մանրատախտակե հատակների քանդում նյութի պահպանումով	$մ^2$	178.9	0.38	67.99
6	Հին շրիշակների ապամոնտաժում	գմ	87.4	0.008	0.70
7	Փայտե պատուհանների քանդում	$մ^2$	91.7	1.41	129.35
8	Պատերից հախճասալերի քանդում	$մ^2$	142.8	0.33	47.12
9	Հատակի հին ց/ավազե հարթեցնող շերտի քանդում 479.69մ2	$մ^3$	14.4	11.65	167.64
10	Պատերի մեջ բացվածքների քանդում	$մ^3$	8.4	8.70	73.08
11	Աստիճանավանդակի մետաղական բազրիքների ապամոնտաժում	գմ	12.0	0.32	3.84
12	Շին.աղբի հավաքում, պարկավորում, տեղափոխում 40մ հեռավորության վրա ձեռքով	տն	36.8	0.56	20.58
13	Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 7կմ հեռավորության վրա	տն	36.8	1.86	68.36
	Պատեր				
1	Պատերի վնասված հատվածների մշակում բետոնակոնտակտ ամրացնող լուծույթով	$մ^2$	34.6	0.26	9.00
2	Պատերի մշակում գիպսային և կավճային մածիկով և ներկում լատեքսային ներկով 2 շերտ	$մ^2$	1035.4	1.44	1490.92
3	10սմ հաստությամբ բետոնե բլոկներից միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	$մ^2$	100.6	2.73	274.64
4	Շարվածքի ամրանավորում Ac-1 d=6մմ	տն	0.2	361.83	72.37
5	Պատերի և միջնորմների բ/որակ գաջե սվաղ	$մ^2$	201.2	2.27	456.72
6	Պատերի միջնորմների բ/որակ ց/ավազե սվաղ հախչասալի տակ	$մ^2$	114.6	1.76	201.70
7	Պատերի երեսպատում եվրոարտադրության հախճասալով /սանհանգույց	$մ^2$	114.6	8.93	1023.38
8	Ալյումինե պրոֆիլներ սվաղի անկյունային եզրերի համար	գմ	260.0	0.13	33.80
9	Շեպերի գաջե սվաղ	$մ^2$	167.1	3.33	556.31
10	Շեպերի բարորոկ լատեքսային համատարած մածկապատումով	$մ^2$	167.1	1.44	240.57
	Աստիճանավանդակ				
1	Աստիճանի և հարթակների երեսապատում չսահող կերամոգրանիտե սալերից	$մ^2$	40.2	11.10	446.22
2	Աստիճանատակերի և հարթակատակերի երեսպատում 9,5մմ հաստությամբ գիպսոկարտոնից մետ ստատներով	$մ^2$	18.0	3.99	71.82
3	Կերամիկ սալերից շրիշակների տեղադրում /պր գրանիտ/ 35գմ 150մմ բարձրությամբ	$մ^2$	5.3	9.13	47.93

4	Առաստաղների բ/որակ գաջե սվաղ	մ^2	17.1	2.48	42.36
5	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	17.1	1.63	27.84
6	Պատերի բ/որակ գաջե սվաղ	մ^2	75.4	2.27	171.20
7	Պատերի բարձորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	75.4	1.44	108.60
8	Փոշեներկված մետ .90սմ բարձրությամբ բազրիքների տեղադրում	գմ	12.0	14.48	173.76
	Դռան բացվածքի ամրացում				
1	Բացվածքի պատերի ամրացում մետաղական անկյունակներից և թերթապողպատից, ամրանային խարսխաձողերով	տն	0.1	159.72	19.01
2	50x50x5մմ անկյունակի արժեքը	գմ	24.0	1.43	34.32
3	Թերթապողպատ H=4մմ	տն	0.0	366.17	5.86
4	Ամրան A500c	տն	0.0	305.30	4.27
5	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ռաբիցա ցանցով	մ^2	4.8	2.36	11.33
	Հատակներ				0.00
1	Խճի շերտի իրականացում 32սմ հաստությամբ	մ^3	59.4	9.72	577.47
2	Միաձույլ ե/բետոնե հատակի սալի պատրաստում B-15 դասի բետոնից 7 սմ հաստությամբ	մ^3	13.0	29.60	384.80
3	Ամրանի արժեքը Ac-1 d=8մմ	տն	1.0	297.68	291.73
4	Ջրամեկուսիչ շերտի իրականացում 4մմ հաստութկամբ իզոգամի շերտով	մ^2	434.0	1.55	672.70
5	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ^2	636.0	0.84	534.26
6	Լամինատե հատակի պատրաստում շրիշակով և սպունգով	մ^2	281.6	5.67	1596.50
7	Մարզադահլիճի վինիլային հատակ 4.5մմ հաստությամբ 0.7մմ պաշտպանիչ հոմոգեն շերտով	մ^2	85.9	13.37	1148.22
8	Հատակի իրականացում պրեսգրանիտե սալիկներով սոսնձի վրա	մ^2	78.9	10.56	833.61
9	Շրիշակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով H-10սմ բարձրության	մ^2	65.4	9.08	593.83
10	Կերամիկական սալերից հատակի պատրաստում /բաց պատշգամբ/	մ^2	72.0	5.65	406.80
11	Կերամիկական սալերից շրիշակներ 10սմ բարձր.	մ^2	43.0	6.38	274.34
12	Խեցե սալերից հատակի պատրաստում /սանհանգույց/ /330x330/մմ	մ^2	58.8	7.36	433.06
13	Վինիլային հատակի պատրաստում 2մմ պաշտպանիչ հոմոգեն շերտը 0.7մմ իր հիմնաշերտով	մ^2	18.6	8.50	158.02
14	Փայտե շրիշակների տեղադրում 100մմ բարձրությամբ	գմ	19.7	0.68	13.40
	Բացվածքներ				
1	Մ/պլաստե սպիտակ դռների տեղադրում	մ^2	43.1	37.83	1628.58
2	Մետաղապլաստե,սպիտակ գույնի դռան վերնափեղկ, ապակեփաթեթով	մ^2	4.0	25.38	100.50
3	Մետաղապլաստե,սպիտակ գույնի,ապակեփաթեթով պատուհաններ, բացվող փեղկ, ներառյալ սարքերը /եվրոպական/	մ^2	33.3	35.16	1170.83
4	Նույնը՝ պատուհանների չբացվող փեղկ	մ^2	106.6	25.38	2704.49
5	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	մ^2	29.8	0.96	28.59
6	Պատուհանագոգի արժեքը B=35սմ	գմ	85.1	2.90	246.79
	Առաստաղներ				0.00
1	Առաստաղների բ/որակ գաջե սվաղ	մ^2	498.1	2.48	1235.39
2	Առաստաղի մշակում գիպսային և կավճային մածիկով և ներկում յատեքսային ներկով 2 շերտ	մ^2	498.1	1.63	811.97
3	Կախովի առաստաղի պատրաստում պլաստմասե նյութից	մ^2	132.8	4.35	577.85

	Տանիք				
	Քանդման աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող տանիքի ասբոհերձաքարե ծածկույթի քանդում	100 մ2	3.2	14.16	45.31
2	Տանիքի ձեղնալուսամուտների քանդում	հատ	2.0	1.70	3.40
3	Տանիքածածկույթի տակ փայտամա ծի քանդում	$մ^3$	6.8	17.34	117.91
4	Շին.աղբի հավաքում տեղափոխում բարձման համար	տն	6.4	1.10	7.04
5	Շին.աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	6.4	1.86	11.90
	Կառուցման աշխատանքներ				0.00
1	Տանիքի փայտե կրող կոնստրուկցիա ների տեղադրում մշակված հականե խիչ մածիկով /հոծ տախտակամած, կանգնակ /	$մ^3$	6.8	155.26	1055.77
2	Տանիքի ծածկույթի իրականացում ցինկապատ տրավմատավոր/պրոֆի լավոր /թիթեղից 0,55 մմ հաստ /կավարամածը --3,425 մ3 /	$100մ^2$	3.2	459.30	1469.76
3	Տանիքի ջրհորդանի և գոգնոցի իրականացում հարթ ցինկապատ թիթեղով /ներառյալ տախտակամածը/	100 մ	0.6	350.69	210.41
4	Գազաթի տախտակամածի պատ րաստում (200x50)մմ տախտակներից հականեխիչ մածիկով	$մ^2$	21.5	6.89	148.14
5	Փայտե կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	$մ^3$	6.8	9.28	63.10
6	Նույնը, կավարամածի և տախտակամածի	$մ^2$	320.0	0.30	96.00
7	Տանիքի ձեղնալուսամուտների կառուցում	հատ	2.0	45.60	91.20
8	Տանիքի ջրահեռացման խողովակների տեղադրում Φ 150 մմ l= 6մ	կ-տ	4.0	16.21	64.84
9	Պիպի ձևավոր ծածկոց ցինկապատ թիթեղից	մ2	28.0	64.67	1810.76
10	Ամրան Φ 6 Ac-1 ամրանալար փայտե կոնստրուկցիաները կապելու	տն	0.0	297.68	8.93
11	Ձնարգելների պատրաստում և տեղադրում 30հատ	գմ	45.0	2.41	108.45
12	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	$մ^2$	264.0	0.84	221.76
13	Գոլորշիամեկուսիչ շերտի պատրաստում 1շերտ ռուբերոիդով բիտումային մածիկի վրա	100մ2	2.6	57.59	152.04
14	Ջերմամեկուսիչ շերտի պատրաստում նոր խարամով	խմ	31.7	5.09	161.25
15	Ավտոամբարձիչի մեքենաժամի արժեքը /4օր/	մ/ժ	12.0	7.96	95.52
	Հիմքերի ջրամեկուսացում և սալվածք				0.00
1	Գոյություն ունեցող սալվածքի և արտաքին բետոնե աստիճանների քանդում	$մ^3$	31.7	2.84	90.03
2	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	68.8	1.49	102.45
3	3-րդ կարգի բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	58.5	0.76	44.42
4	Բնահողի տոփանում	$մ^3$	58.5	0.16	9.35
5	Բացված պատի սվաղում ց/ավազե շաղախով,ցանցի վրայով	$մ^2$	114.6	2.49	285.35
6	Պատի երեսպատում 1շերտ իզոգամով	$մ^2$	114.6	1.70	194.82
7	Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 7կմ հեռավորության վրա	տն	79.9	1.86	148.61
8	Հավաքովի բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300մմ բետոնե հիմքով	մ	118.6	3.63	430.52
9	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	$մ^2$	118.6	1.02	120.97
10	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ /մայթերի/	$մ^2$	118.6	3.15	373.59
	Արտաքին աշխատանքներ				
1	Միաձույլ ե/բետոնե հատակի սալի պատրաստում B-15 դասի բետոնից 7 սմ հաստությամբ	$մ^3$	2.9	29.60	87.02
2	Ամրանի արժեքը Ac-1 d=8մմ	տն	0.1	297.68	17.86

3	Հարթակի և կողային մասերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով	մ^2	12.0	18.319	219.83
4	Արտաքին պատերի ցեմ/ավազե սվաղի իրականացում	մ^2	172.0	1.61	276.92
5	Շեպերի լավորակ ց/ավազե սվաղ	մ^2	46.1	1.70	78.37
6	Արտաքին պատերի և շեպերի ներկում ֆասադային ջրամերժ ներկով, մածկապատումով	մ^2	218.1	0.7	152.67
7	Պոլիկարբոնատե ծածկույթ մետաղական կարկասի պատրաստմամբ (խողովակ 50x30x2մմ՝ 31,2մ, 40x20x2մմ՝ 24,2մ, 30x20x2մմ՝ 10,7մ)	մ^2	9.5	31.14	295.83
8	Ժամանակավոր տախտակամածի կապում և ապամոնտաժում	մ^2	120.0	0.89	106.80
	Բաց պատշգամբներ				
1	B-15 դասի ե/բետոնից ժապավենային գոտու պատրաստում	մ^3	1.5	33.25	50.21
2	Ամրան A500c	տն	0.1	305.34	40.92
3	Ամրանի արժեքը Ac-1 d=6մմ	տն	0.0	297.68	6.85
4	Մետաղական կանգնակների տեղադրում 80x80x6մմ մետաղական խողովակներից	տն	0.7	42.00	30.24
5	80x80x6մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	48.0	5.06	242.88
6	80x80x6մմ մետաղական խողովակների կավարամածի պատրաստում	տն	0.6	108.00	61.56
7	80x80x6մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	38.0	5.06	192.28
8	Մետաղական N10 տաշտաձև հեծանների տեղադրում	տն	0.3	55.56	18.17
9	N10 տաշտաձև հեծանի արժեքը	գմ	38.0	3.18	120.84
10	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.6	24.56	15.15
11	50x50x2մմ մետաղական խողովակների կավարամածի պատրաստում	տն	0.4	108.00	44.50
12	50x50x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	132.0	1.03	135.96
13	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.4	24.56	10.12
14	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0.55մմ հաստությամբ КП-21-0.55մմ	մ^2	80.6	3.26	262.76
15	Ջրհորդանների պատրաստում d=0,55մմ հարթ ցինկապատ թիթեղից b=300մմ	մ^2	3.9	2.94	11.47
16	d=100մմ ջրահեռացման խողովակների տեղադրում (6.0գմ)	կ-տ	2.0	28.86	57.72
17	Ցանկապատի մետաղական կանգնակների տեղադրում 80x80x6մմ խողովակներից	տն	0.2	42.00	7.56
18	80x80x6մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	12.0	5.06	60.72
19	Մետաղական ցանկապատի պատրաստում 40x40x2մմ, 20x20x2մմ, 60x60x4մմ մետաղական խողովակներից	մ^2	36.0	15.12	544.32
20	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ^2	72.0	0.80	57.60
	Ցանկապատ				
1	Գոյություն ունեցող մետաղե ցանկապատի ապամոնտաժում	գմ	77.3	0.47	36.33
2	3-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով	մ^3	9.3	1.49	13.86
3	Խճի շերտի իրականացում 10սմ հաստությամբ	մ^3	1.6	9.72	15.07
4	Բետոնե հիմքի իրականացում ցանկապատի տակ B-12,5	մ3	4.6	33.27	154.37
5	Մետաղական ցանկապատի պատրաստում 40x40x2մմ, 20x20x2մմ, 60x60x4մմ մետաղական խողովակներից	մ^2	111.5	15.12	1685.88
6	Մետաղական դարպասի տեղադրում	մ^2	4.5	19.40	87.30

7	Ցանկապատի մետաղական կանգնակների տեղադրում 80x80x6մմ խողովակներից	տն	0.2	42.00	9.11
8	80x80x6մմ խողովակի արժեքը	գմ	36.0	5.06	182.16
9	Ցանկապատի ներկում	մ2	116.0	0.80	92.80
10	Հողի ետլիցք ձեռքով	մ3	3.1	0.62	1.92
11	Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 7կմ հեռավորության վրա	տն	9.9	1.86	18.45
Տաք և սառը ջրամատակարարման ներքին ցանց					
1	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ Φ40մմ	գմ	6	1.80	10.80
2	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ Φ32մմ	գմ	10	1.38	13.80
3	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ Φ25մմ	գմ	28	1.48	41.44
4	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ Φ20մմ	գմ	62	1.76	109.12
5	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակի մոնտաժ ամրացումով Φ32մմ	գմ	10	2.01	20.10
6	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակի մոնտաժ ամրացումով Φ25մմ	գմ	28	1.88	52.64
7	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակի մոնտաժ ամրացումով Φ20մմ	գմ	41	2.03	83.23
8	Փական d32	հատ	1	2.85	2.85
9	Փական d25	հատ	2	2.68	5.36
10	Փական d20	հատ	8	2.61	20.88
11	Փական d15	հատ	28	2.61	73.08
12	Անկյունային փական	հատ	28	2.93	82.04
13	Լվացարանի ջրընդունիչ-ծորակ խառնիչ	հատ	15	3.49	52.35
14	Տակդիրի ջրընդունիչ ծորակ խառնիչ ցնցուղով	հատ	4	6.66	26.64
15	Ճկախաղավակ Φ15մմ, L=500մմ	հատ	12	1.43	17.16
16	Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում հատակի մեջ «TERMOFLEX» խողովակներով d40մմ	գմ	6	1.14	6.84
17	Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում հատակի մեջ «TERMOFLEX» խողովակներով d32մմ	գմ	20	1.14	22.80
18	Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում հատակի մեջ «TERMOFLEX» խողովակներով d25մմ	գմ	56	0.76	42.56
19	Պոլիպրոպիլենային խողովակների մեկուսացում հատակի մեջ «TERMOFLEX» խողովակներով d20մմ	գմ	30	0.76	22.80
20	Պոլիպրոպիլենե ֆիտիգներ	հատ	120	0.43	51.60
21	Ցանցի փորձարկում	մ	185	0.06	11.10
22	Միացում գործող ցանցին	տեղ	1	7.29	7.29
Կոյուղու ներքին ցանց					0.00
1	3-րդ կարգի հողի քանդում ձեռքով	մ3	3	1.49	4.47
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժ հատակում Φ110	գմ	10	2.14	21.40
3	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժ Φ50	գմ	12	1.57	18.84
4	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժ պատերին Φ110	գմ	30	1.59	47.70
5	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժ պատերին Φ50	գմ	38	0.88	33.44
6	Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	3	13.20	39.60
7	Մանկական նստակոնքի տեղադրում	հատ	12	16.48	197.76
8	Կերամիկական մանկական լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	12	19.88	238.56
9	Ակրիլային դակդիրի տեղադրում սիֆոնով 800x800	հատ	2	20.66	41.32
10	Ստուգիչ -մաքրիչ	հատ	4	4.09	16.36
11	Մաքրիչ կափարիչով	հատ	4	3.14	12.56
12	Հոսակի տեղադրում Φ50	հատ	4	1.44	5.76

13	Ձևավոր մասեր Φ110	հատ	24	1.36	32.64
14	Ձևավոր մասեր Φ50	հատ	50	1.07	53.50
15	Ցանցի փորձարկում	զմ	90	0.24	21.60
	Ջեռուցում				0.00
1	Պատին ամրացվող գազով աշխատող փակ այրման (տուրբո համակարգի) կաթսաների տեղադրում Q=32կվտ հարավ Կորեական արտադրության կամ համարժեք	հատ	2	430.14	860.28
2	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում	էկմ	186	0.94	174.84
3	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց	480	4.72	2265.60
4	Ցանցային տաք ջրի շրջանառու պոմպեր, H=4մ, Q=1,8 մ3 /ժ	հատ	2	45.36	90.72
5	Պոլիպրոպիլենե խողովակ Φ16մմ , ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ	մ	70	1.27	88.90
6	Պոլիպրոպիլենե խողովակ Φ16մմ խողովակաձև մեկուսիչով, ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ	մ	95	1.21	114.95
7	Պոլիպրոպիլենե խողովակ Φ20մմ խողովակաձև մեկուսիչով, ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ	մ	150	1.23	184.50
8	Պոլիպրոպիլենե խողովակ Φ25մմ խողովակաձև մեկուսիչով, ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ	մ	50	1.31	65.50
9	Պոլիպրոպիլենե խողովակ Φ32մմ խողովակաձև մեկուսիչով, ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ	մ	30	1.47	44.10
10	Պոլիպրոպիլենե խողովակ Φ40մմ խողովակաձև մեկուսիչով, ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ	մ	9	1.78	16.02
11	Պոլիպրոպիլենե խողովակ Φ50մմ խողովակաձև մեկուսիչով, ձևավոր մասերի տեղադրմամբ, լվացմամբ, փորձարկմամբ	մ	8	2.06	16.48
12	Օդահեռացման փական Φ15	հատ	41	1.38	56.58
13	փական կարգավորող վերևի Φ15	հատ	41	3.19	130.79
14	փական կարգավորող ներքևի Φ15	հատ	41	3.13	128.33
15	Ջեռուցիչ մարտկոցների կախիչներ	հատ	164	0.40	65.60
16	Ֆիտինգներ պոլիպրոպիլենե խողովակների համա	հատ	750	0.43	322.50
17	Թողարկիչ Փական Φ25	հատ	2	4.17	8.34
18	Փական Φ32	հատ	6	6.75	40.50
19	Հետադարձ փական Φ32	հատ	2	5.22	10.44
20	Ֆիլտրի մոնտաժ՝ Φ=32	հատ	2	6.77	13.54
21	Կոլեկտոր Ի80, l=2մ	հատ	2	13.24	26.48
22	Պատի մեջ անցքի բացում	հատ	8	0.52	4.16
23	Անցքի փակում	մ3	0.04	58.39	2.34
24	Միջհարկային ծածկում անցքի բացում	տեղ	7	0.92	6.44
25	Անցքի փակում	մ3	0.1	58.39	5.84
Էլեկտրաուժային ցանց					
1	Ներանցումային վահան ներառված ավտոմատ անջատիչներով 380Վ 50Ա- 1հատ, 380Վ 40Ա- 2հատ	հատ	1	56.99	56.99
2	Պղնձե մալուխ ВВГнг -5x6մմ2	զմ	25	4.04	101.00
3	Ծայրակալ պղնձե 16մմ2 կտրվածքի համար	հատ	2	1.10	2.20
4	Ճարմանդ	հատ	60	0.20	12.00
5	ՊՎՔ ճկախողովակ 32մմ տրամագծով	մ	25	0.42	10.50
6	Ակոսների պատրաստում 50x50մմ մալուխների անցկացման համար	զմ	60	0.24	14.40
7	Ակոսների փակում գաջե շաղախով	մ2	6	1.55	9.30
8	50մմ միջհարկային ծածկում անցքի բացում	հատ	1	0.92	0.92
9	Անցքի փակում	մ3	0.005	58.39	0.29
10	500մմ հաստության պատի մեջ անցքի բացում	հատ	1	0.92	0.92
11	500մմ հաստության անցքի փակում	մ3	0.01	58.39	0.58

12	Ուղղահայաց հողանցիչ պողպատե անկյունակից 50x50x5մմ	հատ	3	4.35	13.05
13	Հորիզոնական հողանցիչ շերտապողպատից 160մմ2 կտրվածքով	մ	18	0.61	10.98
14	Հորիզոնական հողանցիչ շերտապողպատից 100մմ2 կտրվածքով	մ	20	0.51	10.20
15	4-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում հողանցման համար	մ3	5	4.98	24.90
16	Գրունտի ետլիցք տոփանումով	մ3	5	0.23	1.15
17	Ասֆալտե ծածկույթի քանդում ներառյալ նախապատրաստական շերտերը	մ3	0.6	2.84	1.70
18	Ա/բ ծածկի տակ խճի նախապատրաստական շերտի իրականացում 17սմ հաստությամբ	մ2	6	1.15	6.90
19	Ա/բ խոշորահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ	մ2	6	2.18	13.08
20	Ա/բ մանրահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ-	մ2	6	3.09	18.54
21	Քանդված ասֆալտի բեկորների բարձում ավտոմեքենա և տեղափոխում 13կմ	տն	1.3	2.52	3.28
Էլեկտրալուսավորություն					
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Էլ.լուսավորության վահանի ապամոնտաժում	լր-զմ	2	1.80	3.60
2	Լուսատուի ապամոնտաժում լամպով	հատ	30	0.87	26.10
3	Վարդակների և անջատիչների ապամոնտաժում	հատ	40	0.18	7.20
	Մոնտաժային աշխատանքներ				0.00
1	Լուսավորության վահանակ 12 մոդուլի, մուտքային եռաբևեռ 32Ա , խմբային 6x25Ա միաբևեռ ավտոմատ անջատիչներով /եվրոպական արտադրության/	լր-զմ	1	46.53	46.53
2	Լուսավորության վահանակ 12 մոդուլի, մուտքային եռաբևեռ 32Ա , խմբային 7x25Ա, միաբևեռ ավտոմատ անջատիչներով /եվրոպական արտադրության/	լր-զմ	1	36.37	36.37
3	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ, 27վտ	հատ	71	5.78	410.38
4	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ, 18վտ 1P54 պաշտպանության աստիճանով	հատ	2	4.83	9.66
5	Առաստաղային LED լուսատուների տեղադրում 220Վ, 7վտ սան,հանգույցում	հատ	20	4.36	87.20
6	Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով ՊՊՎ-3x2,5 փակ էլ.հաղորդման գծերի համար	զմ	800	0.48	384.00
7	Հաղորդալար պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով ՊՊՎ-3x4 փակ էլ.հաղորդման գծերի համար	զմ	400	0.58	232.00
8	Անջատիչ մեկստեղանի նորմալ տարբերակի միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220վ, 6Ա	հատ	13	1.50	19.50
9	Նույնը երկստեղանի 220Վ, 6Ա	հատ	14	2.36	33.04
10	Երկբևեռ խրոցակային վարդակ 220Վ, 6Ա հողանցման կոնտակտով տուփով	հատ	50	1.59	79.50
11	Ճյուղավորման տուփ	հատ	40	0.14	5.60
12	Ակոսների պատրաստում հաղորդալարի անցկացման համար 20x20մմ	զմ	500	0.24	120.00
13	Ակոսների փակում գաջե շաղախով	մ2	50	1.5	75.00
14	Ճարմանդ	հատ	2000	0.20	400.00
15	Անցքերի պատրաստում 200մմ հաստության միջնորմի մեջ	հատ	10	0.18	1.80
16	Անցքերի փակում	հատ	10	0.53	5.30
Կոյուղու արտաքին ցանց					0.00

1	3-րդ կարգի հողի մշակում էքսկավատորով կողլիցքով	մ3	16	0.64	10.24
2	3-րդ կարգի հողի քանդում ձեռքով	մ3	5	3.15	15.75
3	Ավազե նախապատրաստական շերտի իրականացում	մ3	2	3.30	6.60
4	Ավազե պաշտպանիչ շերտի իրականացում	մ3	6	2.7	16.20
5	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում dy=160, փորձարկումով	մ	29	1.6	46.40
6	Միացում գործող ցանցին	տեղ	1	7.29	7.29
7	Հավաքովի ե/բ էլեմենտներից (հատակ, պատեր, ծածկ) դիտահոր D=1000մմ	մ3	2.42	115.17	278.71
8	Պոլիմեր-ավազային մտոցի կափարիչ Φ700	հատ	2	28.60	57.20
9	Կոյուղու ցանցի փորձարկում,	գմ	21	0.05	1.05
10	Խրամուղու ետլիցք ,տոփանումով	մ3	11	0.62	6.82
11	Ավելցուկային գրունտի տեղափոխում 5կմ հեռավորության վրա	տ	21	1.10	23.10
Արտաքին էլեկտրամատակարարման ցանց					0.00
1	Կանգնակ շենքի տանիքին մետաղական խողովակից Φ50x4,0 L=3մ	հատ	1	15.03	15.03
2	Լայնակ L50x50x5, L=0,4մ, m=1,823կգ	հատ	2	1.58	3.16
3	Մեկուսիչ ՏΦ-20-01	հատ	2	0.62	1.24
4	Մալուխի ծայրերի հարդարում	հատ	2	1.11	2.22
5	Ճոպանի սեղմակ /орешки/	հատ	4	0.19	0.76
6	Մետաղ կանգնակների ամրակապման համար	տն	0.005	580.54	2.90
7	Հոսանքի տրանսֆորմատոր 100/5Ա	հատ	3	8.32	24.96
8	Մետաղական արկղ փականով հաշվիչի տեղադրման համար 530x645x250մմ,	հատ	1	15.95	15.95
9	Եռաֆազ հաշվիչ	հատ	1	19.99	19.99
10	Մալուխի փռում խրամուղում ԱՎՎԳնգ-4x16մմ2	մ	76	0.79	60.04
11	Մալուխի մետաղական ամրակներ	հատ	120	0.20	24.00
12	էլ. սևեռող մետաղաճոպան Φ6	գմ	40	0.38	15.20
13	Պոլիէթիլենային խողովակ Φ50	մ	76	0.57	43.32
14	Խողովակի անցքի փակում	հատ	2	0.67	1.34
15	Φ50մմ միջհարկային ծածկում անցքի բացում	հատ	2	0.92	1.84
16	Անցքի փակում	մ3	0.02	58.39	1.17
	Ընդամենը				45409.00
	ԱԱՀ 20%				9081.80
	Ընդամենը				54490.80

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Եղվարդի համայնքապետարան
ք. Եղվարդ, Երևանյան 1
ՀՀ Ֆ/Ն գործառնական վարչություն
Հ/հ 900112101028
ՀՎՀՀ 03546128
Համայնքի ղեկավար Ն. Սարգսյան

/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ագարակ>> ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աշտարակի մ/ճ
Հ/հ 247070005407
ՀՎՀՀ 05003862
Տնօրեն՝ Կ. Բարսեղյան

/ ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 2

« » օգոստոսի 2019թ. կնքված

<<ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2>> ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԶՈՐԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐԱԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**<<Զորավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում**	**Պայմանագրի կնքման օրվանից**	**20.12.2019թ.**
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Եղվարդի համայնքապետարան

ք. Եղվարդ, Երևանյան 1

ՀՀ Ֆ/Ն գործառնական վարչություն

Հ/հ 900112101028

ՀՎՀՀ 03546128

Համայնքի ղեկավար՝ Ն. Սարգսյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ագարակ>> ԲԲԸ

ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի

<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աշտարակի մ/ճ

Հ/հ 247070005407

ՀՎՀՀ 05003862

Տնօրեն՝ Կ. Բարսեղյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
« » օգոստոսի 2019թ. կնքված
<<ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/1	<<Զորավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	54 490 800	54 490 800

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Եղվարդի համայնքապետարան

ք. Եղվարդ, Երևանյան 1

ՀՀ Ֆ/Ն գործառնական վարչություն

Հ/հ 900112101028

ՀՎՀՀ 03546128

Համայնքի ղեկավար՝ Ն. Սարգսյան

/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ագարակ>> ԲԲԸ

ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի

<<Արդշինբանկ>> ՓԲԸ Աշտարակի մ/ճ

Հ/հ 247070005407

ՀՎՀՀ 05003862

Տնօրեն՝ Կ. Բարսեղյան

/ստորագրություն/Կ.Տ